ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ)

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

XIX դ. վերջին ինչպես ամբողջ Կովկասը, այնպես էլ Կարսի մարզը տընտեսական նվաճման էր ենթարկվում ռուսական կապիտալի կողմից։ Դրա հետևանքով «տեղի էր ունենում դարավոր բնիկ «տնայնագործական» արհեստագործությունների արտամղում, որոնք Մոսկվայից բերվող ֆաբրիկատների մրցակցության հետևանքով անկում էին ապրում»[1]։ Սակայն Կովկասի տընտեսական նվաճումը և տնայնագործական արհեստների արտամղումը նրա տարբեր շրջաններում հավասարաչափ չէին դրսևորվում. դրանք մի տեղ հումամատաբար ուժեղ էին, իսկ մյուսում՝ թույլ։ Վերջինիս թվին էր պատկանում Կարսի մարզը։ Դա մասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ մարզը Ռուսաստանին միացվեց համեմատաբար ավելի ուշ և հաղորդակցության ուղիների անբավարարության հետևանքով կենտրոնի ու մյուս շրջանների հետ տնտեսապես թույլ էր կապված։ Ռուսական մանուֆակտուրային ապրանքների թույլ ներհոսքը, բացի փոխադրման դժվարություններից, պետք է բացատրել նաև այլ պատճառներով։ Մարզի բնակչության (հատկապես գյուղական) ցածր կենսամակարդակն ու գնողունակությունը հնարավորություններ չէին ընձեռում ներկայացնելու արդյունաբերական ապրանքների մեծ պահանջարկ։ Դրա հետևանքով բնակչության համար ամենակենսական իրերի ու առարկաների պակասը լրացվում էր տեղական արհեստագործական արտադրանքով։ Ընդհանուր առմամբ տնայնագործական արհեստագործության մի շարք ճյուղեր պահպանվում և նույնիսկ զարգացում էին ապրում։ Մարզում տնայնագործական արհեստագործության պահպանումը պայմանավորված էր նաև տեղում արդյունաբերության գրեթե բացակայությամբ, արհեստագործական հումքի առատությամբ, որոշ շրջաններում կիսաքոչվորական բնակչության գոյությամբ, տեղ-տեղ տնտեսության նահապետական կենցաղով, կանանց սոցիալական դրությամբ և այլն։ Արհեստագործությունը նկատելի աշխուժացում էր ապրում թե՛ քաղաքներում և թե՛ գյուղական վայրերում։ Այն ուժեղ էր զարգացած հատկապես քաղաքներում՝ Կարսում և Կաղզվանում։ Կարսում եղել են համքարային կազմակերպություններ[2]։ Այնտեղ գործում էին շուրջ երկու տասնյակ մանր ձեռնարկություններ (օճառի, գարեջրի, լիմոնադի, բրուտագործական, աղյուսի, ներկարարական, սպիրտի մի քանի մեծավաճառ պահեստներ և այլն), որոնցից շատերը հիմնվեցին ռուսական տիրապետության օրոք։ Օրինակ, 1883 թ. Կարս քաղաքում կառուցվում է գարեջրագործարան, որն աշխատում էր տեղական հումքով, և տարեկան եկամուտը կազմում էր 15000 ռուբլի[3]։ Ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրությունը գտնվում էր սաղմնային վիճակում։ 1899 թ. Կարսի մարզում կար 838 ձեռնարկություն, որոնք տալիս էին 603462 ռ. արտադրանք և ունեին 1077 բանվոր։ Դրանցից 751-ը ջրաղացներ էին (550280 ռ. եկամուտով և 900 բանվորով)[4]։ 1913 թ. մարզում գործում էր մանուֆակտուրային տիպի 35 ձեռնարկություն՝ 147 բանվորով[5]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, Երևան, 1975, էջ 754։

2 Վ. Ա. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18—20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971, էջ 70։

3 «Кавказская выставка», вып. I, II, Тифлис, б. г., с. 24.

4 «Обзор Карсской области за 1899 г.», Карс, 1900, ведомость № 2.

5 Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 113, ց. 5, գ. 135, թ. 8։

Նահանգապետի հաշվետվության տվյալներով, եթե 1895 թ. մարզի արհեստավորների ընդհանուր թիվը, ենթավարպետներով և աշակերտներով, հասնում էր 1640 մարդու[6], կազմելով ամբողջ բնակչության 0,75 տոկոսը, ապա 1907 թ.՝ 4346 մարդու[7], այսինքն՝ ամբողջ բնակչության 1,43 տոկոսը։ Քաղաքային առևտրաարհեստավորական բնակչության հիմնական տարրը կազմում էին հայերը։ Արհեստավորների մի մասը կենտրոնացված էր գյուղում։ 1895 թ., նահանգապետի հաղորդած տվյալներով, 1640 արհեստավոր զբաղվել են շուրջ 30 արհեստներով, որոնցից 254-ը՝ քարտաշությամբ, 225-ը՝ դարբնությամբ, 215-ը՝ հյուսնությամբ, 106-ը՝ կոշկակարությամբ և այլն[8]։ Ազգային կազմի տեսակետից 1640 արհեստավորներից 721-ը եղել են հայեր, 434-ը՝ հույներ, 185-ը՝ ռուսներ և այլն[9]։

Մարզի արհեստավորների քանակական աճը կատարվում էր առաջին հերթին քաղաքներում։ Գյուղական վայրերում արհեստագործությունը գտնվում էր զարգացման ցածր աստիճանի վրա և ավելի հաճախ հանդես էր գալիս տնային արտադրության ձևով։ Այստեղ գյուղացին հողագործական աշխատանքներից ազատ ժամանակ (հատկապես ձմռանը) զբաղվում էր իր տնտեսությունում ստացվող հումքի (բրդի, մետաքսի, կտավատի, կաթի, կաշվի, փայտի) վերամշակմամբ ու սպառմամբ։ Մարզում դաշտային աշխատանքները տևում էին 5—6 ամիս, իսկ մնացած ժամանակ գյուղերում ամենուրեք զբաղվում էին տնային արհեստային արտադրությամբ։ Դա գյուղական արհեստային զբաղմունքի ամենապարզ ու պրիմիտիվ ձևն էր, որն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «... անխզելիորեն կապված է հողագործության հետ՝ իբրև մեկ ամբողջություն»[10]։ Տնային արտադրության վերաբերյալ վիճակագրական և փաստագրական տվյալները բացակայում են։ Եվ քանի որ արհեստի այս պարզունակ ձևը անխզելիորեն կապված է եղել երկրագործության հետ, ուստի ցարական ժամանակաշրջանի պաշտոնական և ոչ պաշտոնական հեղինակները այն առանձին հետազոտության չեն ենթարկել, այլ սահմանափակվել են միայն նկարագրելով։

Տնտեսական և շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տնային արտադրությունն աստիճանաբար իր տեղը զիջում էր արհեստին ու մանր ապրանքային արտադրությանը։ Եթե արհեստային արտադրության դեպքում ստացված արտադրանքը, որը դեռևս կապված չէր շուկայի հետ, վաճառվում էր հիմնականում պատվիրատուին, ապա մանր ապրանքային արտադրության արտադրանքը, ընդունելով ապրանքային բնույթ, հանվում էր շուկա։ Տնային արտադրությունը և գյուղական արհեստը գնալով աստիճանաբար ցուցաբերում էին մանր ապրանքային արտադրության վերածվելու միտումներ։

Գյուղական արհեստավորները զբաղվում էին գյուղատնտեսական գործիքների՝ արորների, սայլերի, տափանների, փոցխերի, բահերի արտադրությամբ ու վերանորոգմամբ, նաև՝ քարտաշությամբ, մանածագործությամբ, դերձակությամբ, դարբնությամբ, կոշկակարությամբ, բրուտագործությամբ, արույրագործությամբ և այլն։ Քարտաշության և ընդհանրապես քարագործության արհեստը հիմնականում գտնվում էր հայերի և հույների ձեռքում։ Քարտաշները, աշխատանք գտնելու նպատակով, առանձին կամ խմբերով շրջում էին գյուղերում և քաղաքներում։ 1897 թ. մարդահամարի տվյալներով մարզում կային ինքնուրույն զբաղմունք ունեցող 330 քարտաշ-որմնադիրներ[11], իսկ

---

6 «Обзор... за 1895 г.», 1896, с. 14.

7 «Обзор... за 1907,», 1908, с. 18.

8 «Обзор... за 1895», с. 15.

9 Նույն տեղում, էջ 16։

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 406։

11 «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область», СПб., 1904, с. 104.

1910 թ. դրանց թիվը հասավ 1009-ի[12]։ Առանձնապես լավ համարում ունեին Կաղզվանի օկրուգի Ղոշա-Քիլիսա և Օլթիի օկրուգի Բարդուս հայաբնակ գյուղերի քարագործ արհեստավորները[13]։ Բնև ամբողջությամբ վերցրած գյուղական արհեստները թույլ էին զարգացած, այնուամենայնիվ տարբեր շրջաններում և գյուղերում՝ կապված արհեստագործական հումքի առկայության, բնակչության պահանջարկի, պահպանված ավանդույթի և ազգային առանձնահատկությունների հետ, երբեմն տեղի էր ունենում մասնագիտացում այս կամ այն արհեստատեսակի ուղղությամբ, որը ժառանգաբար փոխանցվում էր հորից որդուն, վարպետից՝ աշակերտին։ Այսպես, Կաղզվանի օկրուգի Խորասանի տեղամասի գյուղական արհեստավորները հիմնականում մասնագիտացել էին քարագործության մեջ։ 1911 թ. պաշտոնական տվյալներով տեղամասի 379 վարպետ, ենթավարպետ և աշակերտ արհեստավորներից 297-ը եղել են քարտաշ-որմնադիրներ, իսկ մնացած 82-ը՝ այլ արհեստագործներ. 26-ը՝ դարբին, 21-ը՝ դերձակ, 10-ը՝ կոշկակար, 7-ը՝ հյուսն, 7-ը՝ կլայեկագործ և այլն[14]։

Կարսի և Կաղզվանի օկրուգների հայաբնակ մի շարք գյուղերում շատ վաղ ժամանակներից տարածված էր մանածագործությունը։ Ռուսաստանին միացվելուց հետո Երևանի նահանգից ներմուծվող և տեղում մշակվող քիչ քանակությամբ բամբակից գյուղացիները կտավ (բյազ) էին գործում տեղական գործածության համար։ Սակայն հետագայում ռուսական ֆաբրիկաների էժան կտավը հեշտությամբ դուրս է մղում տնայնագործականը, և դրանից հետո մանածագործությունն անկում է ապրում[15]։ Մանածագործության տնայնագործական արտադրության հետ էր կապված նաև մետաքսաթելի արտադրությունը։ Սակայն տեղում մետաքսահումքի անբավարարության հետևանքով մետաքսի արտադրությունը նույնպես էական առաջխաղացում չապրեց։ Մարզի շերամապահական քիչ թե շատ հայտնի շրջաններն էին Կաղզվան, Օլթի քաղաքավանները և Փենյակ գյուղը[16]։ Այս տեսակետից Կարսի մարզը զգալիորեն զիջում էր ինչպես Երևանի նահանգին, այնպես էլ անդրկովկասյան մյուս նահանգներին, որտեղ մետաքսի արտադրությունը արդեն ստացել էր կապիտալիստական մանուֆակտուրային արտադրության բնույթ։

Երկրամասի տեխնիկատնտեսական հետամնացության և գյուղաշխարհի առևտրատնտեսական կտրվածության պայմաններում գյուղական արհեստները շարունակում էին գոյատևել, իսկ տեղ-տեղ էլ՝ նույնիսկ զարգանալ։ Այդպիսի արհեստատեսակների թվին էր դասվում, օրինակ, բրուտագործությունը։ Ավանդական ձևով պատրաստվում էին կավե զանազան մեծ ու փոքր իրեր՝ կարասներ, կճուճներ, կժեր, սափորներ, գավաթներ, ափսեներ և այլն։ Բրուտագործներն իրենց արտադրանքը հենց իրենք էին վաճառում՝ շրջելով գյուղերը և ավանները։ Մարզի գյուղատնտես Ստ. Կամսարականի հաշվումներով, բրուտագործությամբ զբաղվող ընտանիքի տարեկան եկամուտը կազմում էր 60—75 ռուբլի[17]։ Կավագործական արհեստի մեջ մասնագիտացել էր Կաղզվանի օկրուգի Ենիջա հայկական գյուղը։ Հիշյալ արհեստատեսակը գտնվում էր հայերի ձեռքում[18]։

Մարզում զարգացած էր նաև կլայեկագործությունը։ 1910 թ. հաշվվում էին 514 կլայեկագործ արհեստավորներ, որոնց կեսից ավելին Կաղզվանի օկրուգից էին[19]։ Այս արհեստը դարձյալ տարածված էր հիմնականում հայերի

---

12 «Обзор... за 1910 г.». 1911, с. 52.

13 «Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа, Карсская область», Тифлис, 1889, с. 214—215 и 262—263.

14 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Լազարյանների ֆոնդ, ց. 91, թ. №131, գ. 113, վավ. № 30, էջ 7։

15 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 116—117։

16 «Труды Кавказской шелководственной станции за 1887 и 1888 гг.». т. I, Тифлис, 1889, с. 152.

17 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 117։

18 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թ. № 131, գ. 113, վավ. № 31, էջ 12։

19 «Обзор... за 1910 г.», с. 52.

մոտ։ Ուշադրության է արժանի նաև արույրե զանազան իրերի՝ մոմակալների, ասպանդակների, սանդերի, հավանգների, լագանների (կոնք), զանգերի ու զանգակների և այլնի արտադրությունը[20]։ Արույրի համաձուլվածքը ստացվում էր պղնձի ու ցինկի խառնուրդից։ Այս արհեստը տարածված էր Կարսի օկրուգի Զաթաղ, Ենգիջա հայկական գյուղերում[21]։ Կաղզվանի օկրուգի մի շարք գյուղերում զբաղվում էին օճառաեփման (օճառագործության) արհեստով[22]։ Կարսի մարզի գյուղական արհեստագործության առանձին արտադրանքներ վաճառքի էին հանվում նաև նրա սահմաններից դուրս։ Օրինակ, Արդահանի և Օլթիի օկրուգների անտառամերձ մի շարք գյուղերում պատրաստված փայտյա թիերը, եղանները, դույլերը և սափորները հաջողությամբ իրացվում էին Ալաշկերտի, Ախալցխայի և Էրզրումի շրջաններում[23]։ Այդ նույն օկրուգներում տնայնագործական մանր ապրանքային բնույթ ուներ կահույքի (փայտյա կահ-կարասիքի), արկղերի (հացահատիկի ամբարման համար), օրորոցների, զամբյուղների և այլնի արտադրությունը[24]։ Օրինակ, Փոցխովի տեղամասի Սաթլել գյուղը պատրաստում էր օրորոցներ, որոնք հանվում էին վաճառքի հարևան գյուղերում[25]։ Օլթիի օկրուգի Վաղովեր, Քեյվանք և Զուվարթ գյուղերի բնակիչները զբաղվում էին խեժի թորմամբ։ Ստացված արտադրանքը՝ մոտ 300 փութ, վաճառվում էր տեղում՝ փութը 10—12 ռուբլով[26]։ Փոցխովի տեղամասում գյուղացիները շրջակա ճահճային խոտերից պատրաստում էին ամուր և գեղեցիկ խսիրներ՝ ճիլոպ, որի հատը վաճառվում էր մեկ ռուբլով[27]։ Այս արհեստատեսակով հիմնականում զբաղվում էին կանայք և երեխաները։ Գյուղական արհեստագործները այդ նույն ճահճաբույսերից հյուսում էին լծաթամբեր, որոնք մեծ պահանջարկ ունեին Ախալցխայի գավառում[28]։ Իսկ Կաղզվանի օկրուգի Օլուխլի հայկական գյուղի բնակիչները զբաղվում էին զամբյուղագործությամբ։

XX դ. սկզբներին անասնապահության զարգացմանը համընթաց սկսեց արագ թափով զարգանալ կաթնապրանքային տնտեսությունը։ Բացի կաթնամշակման մասնագիտացված կապիտալիստական ձեռնարկություններից, որոնք հիմնականում կենտրոնացված էին օտարերկրացիներ Դոլենբախի, Լինգարդի, Զիգենթալերի, Բրիկսինի, Ամմերմանի, Ամետրու, Մոզերի և այլոց ձեռքում, առանձին գյուղեր, երբեմն էլ առանձին տնտեսություններ, իրենց նախաձեռնությամբ հիմնում էին տեղական նշանակություն ունեցող կաթնամշակման ձեռնարկություններ։ Այդ գործում առանձնապես մեծ ձեռներեցություն էին ցուցաբերում հայերը և ռուսները։ Այսպես՝ Կարսի օկրուգի Բլագոդարնոյեի գյուղական համայնքը ուներ յուղագործարան և նախատեսում էր հիմնել նաև պանրագործարան[29]։ Ոչ լրիվ տվյալներով, 1912 թ. միայն Կարսի և Արդահանի օկրուգներում գործում էին պանրի և յուղի 27 ձեռնարկություններ և պանրի մշակման 31 կետեր, որոնց տարեկան եկամտաբերությունը կազմում էր 500

---

20 К. И. Хатисов, Кустарные промыслы кавказского края, Тифлис, 1891, с. 75—77.

21 «Свод статистических данных...», с. 186—187.

22 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 118։

23 К. И. Хатисов, նշվ. աշխ., էջ 57—58, «Район Тифлисско—Карсско—Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», Тифлис, 1897, с. 449—450.

24 К. И. Хатисов, նշվ. աշխ., էջ 60, 63։

25 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թ. № 131, գ. 113, վավ. № 29, էջ 49։

26 «Район...», с. 450.

27 П. Хельмицкий, Карсская область. Военно-статистический и географический обзор, ч. 2, Тифлис, 1893, с. 64.

28 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թ. № 131, գ. 113, վավ. № 29, էջ 48։

29 Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 13, ց. 7, գ. 1050, թ. 4։

հաղ. ռուբլի[30]։ Պանրամշակման կետերը պատկանում էին տեղացի ձեռնարկատերերին և գյուղական համայնքներին։ «Կաթնային տնտեսության շահավետությունը,— գրում էր «Կարս» շաբաթաթերթը,— գիտակցում են իրենք՝ բնակիչները, և ամեն տարի պանրագործական ու յուղագործական ձեռնարկությունները շատանում են»[31]։ Անասնապահական առանձին շրջաններ, մասնագիտանալով կաթնամշակման մեջ, գնալով մեծացնում էին պանրի ու յուղի արտադրությունն ու վաճառքը ինչպես Անդրկովկասի շուկաներում, այնպես էլ Ռուսաստանի քաղաքներում։ Այդ տեսակետից մարզն Անդրկովկասում գիջում էր միայն Բորչալուի գավառին[32]։

Կաղզվանի և Օլթիի պտղաայգեգործական շրջաններում տարածված էր չորացված մրգերի, զանազան մուրաբաների, մրդահյութերի, պաստեղների և պահածոների պատրաստման արհեստը[33]։ Այն տարածված էր հատկապես Կաղզվանի օկրուգի Փաքրան, Կերս, Խար, Ղարաբաղ, Խալի-Կշլաղ, Հուսեին-Քենտ, Ջերիխլի, Գելիմջան գյուղերում և, իհարկե, Կաղզվան քաղաքավանում[34]։ Առանձին պտղատեսակներից՝ թթից, խնձորից, ինչպես նաև մարզում մշակվող քիչ քանակությամբ խաղողից, ստացվում էր նաև որոշ քանակությամբ օղեսպիրտ։ 90-ական թվականների սկզբներին թորման ճանապարհով տարեկան ստացվել է մոտ 8000°[35], իսկ 1907 թ.՝ շուրջ 45000° սպիրտ[36]։ Բացի այդ, մեծ քանակությամբ միրգ, հիմնականում չորացված վիճակում, վաճառվում էր մարզի տարբեր գյուղերում ու քաղաքներում։ Այսպես՝ դարավերջին տարեկան ստացվում էր 15—20 հազ. փութ թութ, որի մի զգալի մասը չոր վիճակում հանվում էր վաճառքի[37]։ Սա նշանակում է, որ պտղաայգեգործությունը և դրանից ստացված մթերքների վերամշակման հետ կապված որոշ զբաղմունքներ ներգրավվել էին ապրանքադրամային (շուկայական) հարաբերությունների ոլորտը։ Սակայն միշտ չէ, որ պտղաայգեգործական մթերքների առքն ու վաճառքը դրամային ձև էր ընդունում։ Հաճախ դրանք փոխանակվում էին ցորենի ու գարու կամ էլ արհեստագործական այլ ապրանքների հետ։

Գյուղացիության զբաղմունքի յուրօրինակ ճյուղերից էր մեղվաբուծությունը, որն ամենից ավելի զարգացած էր Օլթիի օկրուգում։ 1896 թ. մարզում հաշվվում էր մոտ 8000 փեթակ, որից ստացվում էր շուրջ 2000 փութ մեղր ու մեղրահաց[38]։ Արդեն 1910 թ. կար շուրջ 15000 փեթակ՝ ավելի քան 5000 փութ արտադրանքով, որի մի մասը վաճառքի էր հանվում մարզում և նրա սահմաններից դուրս[39]։

Մարզում տարեկան միջին հաշվով ստացվում էր 6—10 հազ. փութ կտավատ։ Գործում էին տնայնագործական բնույթի ձիթհան գործարաններ, որոնք արտադրում էին ձիթայուղ։ Ստացված կտավատի մյուս մասը թորվում էր Թիֆլիսի ձիթագործարաններում և արտահանվում էր արտասահման՝ մասնավորապես Մարսել[40]։ Ձիթարտադրությունը տարածված էր Կաղզվանի օկրուգի Բաշքեոյ, Արմուտլի, Նախիջևան, Ձիրնի, Ձիրչի հայկական գյուղերում։ 1890 թ.

30 «Журнал заседанія съезда окружных начальников Карсской области 17—21-го мая 1913 года», Карс, 1913, с. 59.

31 «Карс», 1913, № 15.

32 И. И. Утурашвили, Развитие капиталистических отношений в деревне Восточной Грузии (1864—1914 гг.), (автореф. канд. дисс., Тбилиси, 1967, с. 43).

33 «Район...», с. 444—446.

34 Նույն տեղում, էջ 428։

35 М. Баллас, Виноделие в России, ч. 3, СПб., 1897, с. 225; «Район...», с. 445.

36 «Обзор... за 1907 г.», 1908, с. 16.

37 Ст. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, с. 23.

38 «Обзор...за 1896 г.», 1897, с. 13.

39 «Памятная книжка и адрес-календарь Карсской области на 1912 год», Тифлис, 1911, ведомость № 11, с. 31.

40 «Район...», с. 423.

Կարսի մարզում կար 40 ձիթհանք[41]։ Կտավատի յուղը հիմնականում գործածվում էր որպես սննդամթերք, ինչպես նաև սենյակների լուսավորման համար։ Սակայն 1890-ական թվականներին, երբ բնակչության կենցաղի մեջ սկսեց մուտք գործել նավթը, կտավատի մշակությունը հետևաբար և ձիթարտադրությունը պակասեց[42]։ Մարզի ռուս բնակիչները գյուղերում վուշի ցողունից գործում էին կոպիտ կտավ (քաթան)[43]։ Քաթանագործությունը զարգացած էր նաև Կարսի օկրուգի Ենիքյոյ հայկական գյուղում[44]։

Մարզում բավականաչափ զարգացած էր ալրաղացությունը։ Հացահատիկի հումքի մշտական առկայությունը կենսական պահանջ էր դարձնում գյուղերում ջրաղացներ ունենալը։ Մարզի գահավեժ գետակներն ու առվակները բնական նպաստավոր պայմաններ էին ստեղծում ջրաղացների կառուցման համար։ Յուրաքանչյուր բնակավայր անխտիր ուներ մեկ, երբեմն էլ ավելի ջրաղաց։ XIX դ. 90-ական թվականների սկզբներին մարզում կար 753 ջրաղաց, որից 7-ը ունեին հինգ և ավելի քար, 27-ը՝ չորս քար, 64-ը՝ երեք քար, 180-ը՝ երկու քար և 475-ը՝ մեկ քար[45]։ Այդ ջրաղացները կենտրոնացված էին գերազանցապես հայերի ձեռքում[46]։ Ալրաղացության արհեստը նույնպես կրում էր տնայնագործական բնույթ։ Յուրաքանչյուր ջրաղացում, բացի ջրաղացպանից, ընդգրկված էին 1—2 վարձու բանվոր։

Կարսի մարզի տնայնագործական արտադրության կարևոր ճյուղերից էին բրդագործությունը ու դրա մշակման հետ կապված մի շարք արհեստատեսակներ։ Մարզում հաշվվում էր 400—500 հազ. գլուխ ոչխար։ Եթե ղեկավարվենք Ա. Քալանթարի, Կ. Խատիսովի, Ա. Փիրալովի, Վ. Բոչկարևի հաշվման մեթոդով և ընդունենք, որ յուրաքանչյուր գլուխ ոչխարը տարեկան կարող է տալ մինչև 4 ֆունտ բուրդ, ապա կարող ենք ասել, որ մարզում տարեկան ստացվում էր ավելի քան 50 հազ. փութ բուրդ, որի մոտ մեկ հինգերորդ մասը՝ 10 հազ. փութը, արտահանվում էր, իսկ մնացածի զգալի մասը տնայնագործական վերամշակման էր ենթարկվում և սպառվում տեղի ու Անդրկովկասի շուկաներում[47]։ Բրդագործությունն ավելի կամ պակաս չափերով տարածված էր մարզի գրեթե բոլոր անասնապահական շրջաններում։ Երկար ու խստաշունչ ձմռանը գյուղական բնակչությունը, հատկապես կանայք տնային պայմաններում գործող արհեստանոցներում զբաղվում էին բրդի մշակմամբ։

Քանի որ մարզ ներմուծվող սահմանափակ քանակությամբ մանուֆակտուրային և արդյունաբերական այլ ապրանքները չէին կարող բավարարել բնակչության օրըստօրե աճող պահանջմունքները, իսկ տեղում արդյունաբերական արտադրությունը դեռևս գտնվում էր սաղմնային վիճակում, ուստի այդ բացը ավանդույթի ուժով շարունակվում էր լրացվել տնայնագործական արտադրությամբ։ Հայկական, ռուսական, քրդական գյուղերի բնակչությունը հիմնականում ոչխարի բրդի հումքով, հնատիպ դազգահների միջոցով պատրաստում էր թաղիքներ, գորգեր, մահուդ, կարպետներ, փալասներ, վարագույրներ (փարդա), խուրջիններ, ջվալներ և բրդյա զանազան այլ առարկաներ, որոնց մի մասը սպառվում էր տեղում, իսկ մյուսը՝ արտահանվում Անդրկովկասի շուկաները, երբեմն էլ՝ նրա սահմաններից դուրս[48]։ Առանձնապես մեծ համբավ

41 «Всеподданнейший отчет... за 1890 г.», с. 12—13.

42 «Район...», с. 423.

43 П. Хельмницкий, նշվ. աշխ., էջ 43։

44 Я. Д. Малама, Описание Эрзрумского вилайета, СПб., 1874, с. 122.

45 П. Хельмницкий, նշվ. աշխ., էջ 172—183։

46 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 510, թ. 72—77։

47 «Район...», с. 433; А. Б. Евангулов, Данные о ввозе и вызозе шерсти в Закавказье («Труды первого кавказского съезда сельских хозяев 15—24 ноября 1909 г. в Тифлисе», Тифлис, 1911, с. 348—349); А. С. Пиралов, Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПб., 1913, с. 21; К. Хатисов, նշվ. աշխ., էջ 9—11։

48 Մատենադարան, (ալարյանների ֆոնդ, թ. № 131, վավ. № 11—28, էջ 55, թ. № 131, գ. 113, վավ. № 29, էջ 48։

ուներ «յամանի» կոչվող գորգը[49], լավ համարում ուներ ռուս բնակչության կողմից տնայնագործական եղանակով պատրաստվող մահուդը[50]։ Բրդի մշակման տնայնագործական համակարգը ժամանակի ընթացքում որակական էական փոփոխություն չկրեց։ Մարզում ֆաբրիկագործարանային արտադրության բացակայության պայմաններում բրդագործությունը տնային պարզ արտադրության նախասկզբնական ձևերից այն կողմ չանցավ։

Տնայնագործական արհեստագործության որոշ արտադրատեսակներ ունեին բարձր որակ։ 1889 թ. Թիֆլիսի գյուղատնտեսական ցուցահանդեսում ներկայացված մարզի տնայնագործական մի շարք արտադրատեսակներ արժանացան մրցանակների ու գովեստագրերի։ Այսպես, օրինակ, Կաղզվանի օկրուգի բնակիչ Սեյրան Շամսադինովը գորգի և թաղիքի համար արժանացել էր արծաթե մեդալի։ Նույն օկրուգի բնակիչ Մկրտիչ Դևորգյանը պղնձե ամանեղենի համար պարգևատրվել էր բրոնզե մեդալով և 3-րդ կարգի դիպլոմով։ Կարսի օկրուգի բնակիչ Հովհաննես Տորունյանը կարպետի (ջեջիմ) համար նույնպես պարգևատրվել էր բրոնզե մեդալով և 3-րդ կարգի դիպլոմով։ Ընդհանուր հաշվով Կարսի մարզից այդ ցուցահանդեսում ներկայացված արհեստագործական արտադրատեսակներից երկուսը արժանացել էին արծաթե, հինգը՝ բրոնզե մեդալների, իսկ տասներկուսը՝ գովեստագրերի[51]։

Այսպիսով, ռուսական տիրապետության ժամանակ մարզում բավականաչափ աշխուժացել էր գյուղական արհեստագործությունը, այդ թվում՝ տնայնագործական արհեստագործությունը, որը հիմնականում կրում էր մանր ապրանքային բնույթ։ Միաժամանակ ռուսական կապիտալի ու ֆաբրիկագործարանային արտադրանքի որոշ տեսակների ներհոսքի հետևանքով մի քանի արհեստատեսակներ (մանածագործություն, կտավագործություն, ձիթահանություն) անկում ապրեցին։ Սակայն տեղում արդյունաբերության բացակայությունը, դրսի, և, առաջին հերթին, ռուսական ֆաբրիկագործարանային ապրանքների սահմանափակ ներհոսքը և գյուղացիության դրամական ցածր գնողունակությունը ի վիճակի չեղան արտամղել թե՛ քաղաքային և թե՛ գյուղական արհեստագործության շատ ու շատ տեսակներ։

СЕЛЬСКИЕ РЕМЕСЛА В КАРССКОЙ ОБЛАСТИ
(конец XIX—начало XX вв.)

АРАРАТ АКОПЯН

Резюме

В конце XIX—начале XX вв. в результате отсутствия местной промышленности, трудностей, связанных с перевозкой русских фабрично-заводских товаров, низкого жизненного уровня и покупательной способности крестьянства, а также полукочевого образа жизни части населения в сельских местностях Карсской области продолжали сохраняться, а местами даже оживляться сельские промыслы. Особенно развились: переработка шерсти, молока, мукомольное дело, гончарное и ряд других традиционных видов ремесел. Но в то же время в результате проникновения русского капитала и дешевой мануфактурной продукции некоторые виды ремесел, к примеру, ткачество (в том числе изготовление льняного холста) или же маслоделие и т. п. переживали упадок.

---

49 А. С. Пиралов, Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПб., 1913, с. 65.

50 П. Хельмицкий, նշվ. աշխ., էջ 12։

51 «Всеподданнейший отчет... за 1889 г.», 16—17, «Кавказская выставка предметов сельского хозяйства и промышленности», Тифлис, 1889, с. 18.